

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԳԼԽԱԻՈՐ ԹՈՒԱԿԱՆՆԵՐԸ

1	Սուրբ Փրկիչ՝ Յիսուս Քրիստոսի ծնունդը Բեթլեհեմի մէջ: Տարիներ ետք Եթեսիոյ Ուրֆա Աբգար թագաւորը Յիսուս կը հրաւիրէ իր պալատը որ զինք բուժէ: Աբգարի սուրհանդակները կը հանդիպին Յիսուսի: Յիսուս անոնց հագուստի կտոր մը կու տայ որուն վրայ տպուած էր Աստուծոյ Պատկերը: Երբ հագուստը կը բերուի Եթեսիա , Աբգար արդէն բժշկուած էր:
33	Յիսուսի խաչելութիւնը, Յարութիւնը եւ Համբարձումը: Յարութիւնէն 50 օր ետք Սուրբ Հոգին կ'իջնէ Երուսաղէմի մէջ հաւաքուած Առաքեալներուն վրայ:
43	Թաղէոս Առաքեալ Հայաստան կու գայ քրիստոնէութիւնը քարոզելու համար: Կը նահատակուի Հայաստանի հարաւը՝ Արտազի մէջ: 66-68.-Բարդողիմէոս Առաքեալ կը քարոզէ Հայաստանի մէջ: Ան եւս կը նահատակուի Հայաստանի հարաւը՝ Ալպաքի մէջ: Հայաստանեայց եկեղեցին Թաղէոս եւ Բարդողիմէոս առաքեալներու անունով կը կոչուի Առաքելական եկեղեցի:
75	Սանատրուկ եւ իր աղջիկը՝ Սանդուխտ, կը դառնան քրիստոնէայ: Սանատրուկ թագաւոր իր լորտերուն եւ հեթանոսներուն ճնշումներուն տակ կ'ուրանայ քրիստոնէութիւնը եւ կը սպաննէ իր աղջիկը: Սանդուխտը Հայաստանեայց եկեղեցոյ առաջին Սուրբն է:
286	Տրդատ թագաւոր կը բանտարկէ քրիստոնէայ դարձած Գրիգորը, որուն հայրը մասնակցած էր իր հօր՝ Խոսրով Ա.ի սպաննութեան: Գրիգոր կը նետուի Արտաշատի պալատին խոր վիրապը, ուր կը մնայ 15 տարի:
301	Տրդատ Գ. կը հալածէ քրիստոնէաները Հայաստանի մէջ: Ան կը սպաննէ 37 քրիստոնէայ կոյսեր, որոնք փախած էին հռոմէական հալածանքէն եւ հաստատուած Հայաստան, որովհետեւ անոնցմէ մին՝ Հռիփսիմէ կոյսը մերժած էր իր հետ ամուսնանալ: Այս խումբին գլխաւորը Գայեանէն էր, որ Հռիփսիմէի հետ կը նկատուի Հայաստանեայց եկեղեցոյ հիմնադիր սուրբերէն մէկը: Այս ոճիւնէն ետք, Տրդատ Գ. կը հիւանդանայ: Իր քոյրը՝ Խոսրովիդուխտ երազ մը կը տեսնէ, ուր մարդ մը կ'ըսէ թէ պէտք է վերջ գտնէ քրիստոնէաներու հալածանքը: Խոսրովիթըմիստ կը պատմէ իր երազը եւ կ'ըսէ թէ պէտք է Գրիգորը դուրս բերէ Խոր Վիրապէն , որպէսզի առողջանայ: Թագաւորը կ'ընդունի ազատել Գրիգորը: Գրիգոր կը բժշկէ Տրդատը եւ զինք ու բոլոր պալատականները Քրիստոնէայ կը մկրտէ: Տրդատ քրիստոնէութիւնը կը յայտարարէ Հայաստանի պետական կրօնը: Այսպիսով Հայաստանը կը դառնայ Քրիստոնէայ առաջին պետութիւնը: Աւելի ուշ Գրիգոր տեսիլք մը կը տեսնէ ուր Յիսուս երկինքէն կ'իջնէ, ոսկիէ մուրճով մը Վաղարշապատի մէջ հողը կը փորէ եւ վրան կը բարձրանայ հսկայ, քրիստոնէայ եկեղեցի մը: Գրիգոր կ'արթննայ: Ան կը կառուցէ իր տեսիլքին մէջ տեսած եկեղեցին ճիշդ հոն ուր Յիսուս իջած ու փորած էր եւ Վաղարշապատը կը վերանուանէ Էջմիածին, որ կը նշանակէ Միակ Ծնեալին Իջած Վայրը: Հայ ժողովուրդը Քրիստոսի լոյսին բերած ըլլալուն համար Սուրբ Գրիգոր կը կոչուի Լուսաւորիչ, եւ ընդունուած է որպէս Հայաստանեայց եկեղեցոյ գլխաւոր սուրբը:
354	կը ծնի սուրբ Օգոստինոս, որ կը նկատուի Յունական փիլիսոփայական աւանդութեան եւ Հրէա-Քրիստոնէական կրօնական աւանդութեան եւ հաւատքի միաձուլման գլխաւոր դէմքը:
365	Սուրբ Մեծն Ներսէս Ա. կաթողիկոս, 353-373, Աշտաշատի մէջ կը կազմակերպէ Հայաստանեայց եկեղեցոյ առաջին Խորհրդաժողովը: Այս

	ժողովին կ'որոշուի եկեղեցիներու մէջ կարգ, կանոն եւ միօրինակութիւն ստեղծել: Կ'որոշուի նաեւ հիմնել դպրոցներ, հիւանդանոցներ եւ այլ բարեսիրական հաստատութիւններ:
387	Մեծն Ներսէսի որդին Սահակ Պարթեւ կը դառնայ Սահակ Ա. կաթողիկոս: Վրամշապուհ թագաւորի օժանդակութեամբ ան կը քաջալերէ Ս. Մեսրոպ Մաշտոցը որ ստեղծէ հայկական Այբուբէնը եւ գլխաւորելով առաջին թարգմանիչները, հայերէնի թարգմանեն քրիստոնէական կարեւոր հատուածներ: Թարգմանական աշխատանքը եւ զուտ հայկական գործերու ստեղծումը կը կազմեն հայկական գրականութեան ոսկեդարը, ճորդարուն Ս. Մեսրոպ կ'ամբողջացնէ հայկական Այբուբէնը:
406	Ս. Մեսրոպ կ'ամբողջացնէ հայկական Այբուբէնը:
433	կ'ամբողջանայ Աւետարանի հայերէնի թարգմանութիւնը:
444	կը գումարուի Ծահապաւանի Համաժողովը: Կը մշակուին հայաստանեայց եկեղեցւոյ առաջին օրէնքները:
449	Սասանեան Պարսկաստանի Հազկերտ Բ. կայսրը կը պարտադրէ որ հայերը ընդունին զրադաշտական կրօնքը: Այս առթիւ կը գումարուի Աշտաշատի Համաժողովը:
451	Աւարայրի դաշտին վրայ, Վարդան Մամիկոնեանի եւ Ղեւոնդ Երեցի գլխաւորութեամբ, հայերը կը մղեն իրենց կրօնքը եւ խղճի ազատութիւնը պաշտպանելու առաջին պատերազմը: Այս պատերազմի պատճառաւ հայերը չեն կրնար մասնակցիլ Քաղկեդոնի Խորհրդաժողովին, ուր կ'որոշուի որ Յիսուս Քրիստոս ունի երկու տարբեր Բնութիւններ՝ աստուածային եւ մարդկային, որոնք անբաժանօրէն կը Գտնուին մէկ անձի մէջ, մինչ Հայաստանեայց եկեղեցին Սուրիանի եւ Եթովպիական Ուղղափառ, Քօփթ եւ հնդկական Մալապար Եկեղեցիներուն հետ կը դաւանի Սուրբ Սիրիլի բանաձեւին՝ որ կ'ըսէ թէ Մէկ է Մարմնացեալ Խօսքին Բնոյթը:
484	Վարդան Մամիկոնեանի զարմիկ՝ Վահան Մամիկոնեանի գլխաւորութեամբ յաղթական պատերազմէ մը ետք՝ Պարսիկներուն հետ կը կնքուի Նվարսակի դաշինքը, եւ պարսիկները կ'ընդունին որ հայերը կ'իրարկեն Իրենց քրիստոնէայ կրօնքը ազատօրէն: Հայաստանեայց Եկեղեցին կը մերժէ Քաղկեդոնի Ժողովին քրիստոնէական բնոյթը:
614	Պարսիկները Երուսաղէմի մէջ կը քանդեն աւելի քան 70 հայկական եկեղեցիներ եւ վանքեր, որոնցմէ շատերը երբէք չ'ի վերակառուցուեցան:
661	Զուարթնոց եկեղեցիին կառուցումը ամբողջացած է:
685	Բիւզանդական Յրւոթինեան կայսրը կը փորձէ պարտադրել որ Հայաստանեայց Առաքելական եկեղեցին միանայ Բիւզանդական եկեղեցւոյ Հայերը կը մերժեն միանալ եւ ինք կ'աւերէ Հայաստանը:
737	Վահան Գողթնացի Իշխանը որ իսլամացած էր եւ դարձած խալիֆային պալատականը, կը դրժէ իսլամութիւնը եւ կը դառնայ քրիստոնէայ: Ան կը սպաննուի այդ պատճառով:
862	Խաչքարի արուեստը իր գագաթնակէտին կը հասնի:
893	Երկրաշարժ մը աւերակ կը դարձնէ Դիւնի կաթողիկոսութիւնը:
931	Ստեփաննոս Բ. Ռշտունի կաթողիկոսը կը փոխադրէ կաթողիկոսարանը Աղթամար կղզին, որ Վասպուրականի Արծրունեաց թագաւորութեան նստատեղին էր:
941	Անանիա կաթողիկոսը կաթողիկոսութիւնը Աղթամարէն կը փոխադրէ Արծինա, Անիի մոտ: Իր կաթողիկոսութեան օրով կը կառուցուին Հաղբատի, Սանահինի, Հորոմոսի, Նարեկի եւ այլ վանքեր:
951	կը ծնի Գրիգոր Նարեկացին: Ան եղած է Հայաստանեայց եկեղեցւոյ խորհրդապաշտ մեծագոյն բանաստեղծը, որ նշանաւոր է իր «Մատեան

	Ողբերգության » սքանչելի գործով որուն համար ինք կ'ըսէ « սրտի Խորքէն խօսք Աստուծոյ հետ »: Ան կը բաղկանայ 366 հատուածներէ, Ամփոփուած 95 գլուխներու տակ:
988	Սմբատ Բ. Բագրատունի տիեզիրակալ թագաւորը կը դնէ Անիի Մայր Տաճառին հիմնաքարը:
989-990	Փագիկ Ա. կը դառնայ թագաւոր: Իր օրով Բագրատունեաց Հարստութեան Մայրաքաղաք Անին կը հասնի իր զարգացման գագաթնակէտին եւ կը վերանուանուի «1001 Եկեղեցիներու քաղաք»: Հայկական ճարտարարուեստը կ'ապրի իր Ոսկեդարը եւ իր ազդեցութիւնը Կը տարածուի մինչեւ Արեւմտեան Եւրոպա:
992	Սարգիս Ա. Սեւանցի կաթողիկոսը, կաթողիկոսարանը Արթինայէն կը փոխադրէ Անի:
1000	Կ'ամբողջանայ Անիի Մայր Տաճառին կառուցումը:
1065	Գրիգոր Վկայասէր կ'ընտրուի կաթողիկոս եւ կաթողիկոսարանը կը փոխադրէ Սամաթիա:
1080	Ռուբէն Ա. իշխան կը դառնայ Կիլիկիոյ թագաւոր:
1084	Յովհաննէս Սարկաւագ վարդապետ կը վերանորոգէ հայկական տոմարը:
1097	Կեսարիոյ, Սուրիոյ եւ Կիլիկիոյ հայերը կ'օգնեն առաջին Խաչակիրներուն որ ազատագրեն Սուրբ Հողը իսլամներուն ձեռքէն: Յաջորդող Երեք հարիւրամեակներուն հայերը կը գործակցին Խաչակիրներուն:
1168-69	Ներսէս Լամբրոնացի թարսուսի Առաջնորդ կը ձեռնադրուի: Ան եկեղեցիներու Էքիմէնիք շարժումին առաջնորդը կը նկատուի, քրիստոնէայ եկեղեցիներու մէջ միութիւն մը ստեղծելու իր ջանքերուն պատճառով:
1105	Գրիգոր Բ. կաթողիկոսը կը վախճանի: Ան ընտրուած էր 1065ին վերջ տալով աթոռին հնգամեայ թափուր շրջանին՝ սկսած Խաչիկ Կաթողիկոսի մահէն: Գրիգոր Բ. վերանորոգեց տօնացոյցը եւ թարգմանել տուաւ վկայութիւններ, կոչուելով Վկայասէր:
1113	Կիլիկիոյ Խորհրդածողովը կը դատապարտէ Աղթամարի եպիսկոպոսը որ ինքզինք եպիսկոպոս հռչակած էր:
1147	Գրիգոր Գ. Պահլավունի կաթողիկոսը կաթողիկոսական աթոռը կը փոխադրէ Հոռմկլա, Կիլիկիոյ հարաւ արեւելքը:
1166	Ներսէս Ընորհալին, Գրիգոր Գ. Պահլավունիին եղբայրը, կը դառնայ կաթողիկոս որպէս Ներսէս Դ.: Ներսէս Ընորհալին ծանօթ է որպէս բանաստեղծ: Ան հայկական Միջնադարեան գրականութեան գլխաւոր բանաստեղծներէն մէկն է: Իր գործերուն մեծամասնութիւնը տեղ գտած է եկեղեցւոյ ժամագրքերուն մէջ:
1166	Ներսէս Ընորհալի կ'ընտրուի աթոռակից կաթողիկոս, կը յաջորդէ իր եղբոր Գրիգորիս Գ.ին, եւ կը գրէ իր «Ընդհանրական Նամակը»:
1168	Մահ Թորոս Բ. իշխանին, նուաճելէ ետք ամբողջ Կիլիկիան:
1179	Ներսէս Լամբրոնացի կը խօսի «Ատենաբանութիւն» հրեղէն ճառը ի նպաստ եկեղեցւոյ միութեան: Ան կը հրատարակէ «Մեկնութիւն Առակացը» նոյն տարին:
1180	Սամուէլ Անեցի կը հրատարակէ իր հայոց պատմութեան «Ժամանակագրութիւնը»:
1184	Մխիթար Գոշ կը սկսի կազմել Դատաստանագիրքը, որ մեծ ազդեցութիւն ունեցաւ իբրեւ հայկական իշխանութիւններու եւ մեծ գաղութներու օրինագիրքը: Վախթանգ Զ., վրացի իշխան եւ թագաւորը, պիտի ընդունի զայն իր օրինագիրքին մէջ:

1186	Լեւոն Բ. Իշխան Կիլիկիոյ, կը շինէ Սիս Քաղաքը, այժմ Քոզան:
1199	Լեւոն Բ. Կիլիկիոյ իշխանը կը պսակուի թագաւոր, դառնալով Լեւոն Ա. թագաւոր:
1262	Թորոս Ռոսլին, հայկական մանրանկարչութեան ամենէն նշանաւոր դէմքը, Լէօ Իշխանին եւ Քէրան Տիկնոջ համար սրբանկար մը կը պատրաստէ: Թորոս Ռոսլին ճանչցուած է որպէս Իտալական վերածնունդի նախահայրը:
1292	Եգիպտոսի Մամլուքները կը գրաւեն Հռոմկլայի կաթողիկոսութիւնը: Ստեփաննոս Դ. կաթողիկոսը եւ իր եկեղեցականները, որոնց մէջ նաեւ իր աջ բազուկը՝ Գրիգոր Լուսաւորիչը, կը տարուին Գահիրէ:
1293	կաթողիկոսութիւնը կը փոխադրուի Կիլիկիոյ Մայրաքաղաք՝ Սիս:
1306	Տանթէ Ալլէկիերին կը սկսի գրել իր Աստուածային Կատակերգութիւն գործը:
1311	կը հիմնուի Երուսաղէմի Պատրիարքութիւնը:
1333	Մոմիկ արուեստագետը կը մահանայ: Մոմիկը Կիլիկիոյ մէջ սկսած է որպէս մանրանկարիչ: Ստեփան Օրֆելեան Եպիսկոպոսը զինք կը բերէ Տաթևի վանքը որ արեւելեան մեծն Հայաստանի մէջ Սիւնեաց աշխարհի հոգեւորական կեդրոնն էր: Մոմիկը Գլաձոր մանրանկարթական դպրոցի լաւագոյն ներկայացուցիչն է: 13 ռդ դարէն սկսեալ ան Խաչքարեր կը շինէ: Իր նկարչութիւններէն կը ստեղծէ յատուկ ճարտարագիտութիւն եւ կը կառուցէ երկու պատմական թանգարան-եկեղեցիներ Նորավանքի մէջ:
1333	հակաճառութիւն կը բռնկի հայ եկեղեցւոյ ուղղափառութեան մասին, զոր Միաբանող Եղբայրները -հիմնուած Յովհաննէս Քոնստնտին 1328 ին - տեսնելու իմաստութիւնը եւ գիտութիւնը չունէին:
1346	Վայոց Ձորի մէջ կը ծնի վարդապետ, փիլիսոփայ, դաստիարակ եւ աստուածափան Գրիգոր Տաթևացին: Գրիգոր Տաթևացին եւ Յովհաննէս Որոնցի Վարդապետը՝ ուսուցիչ, աստուածափան եւ Տաթևի Համալսարանի Հիմնադիր, դէմ կը հանդիսանան Հրովմէական Եկեղեցւոյ հետ միութեան:
1375	Լեւոն Ե. գերի կ'իյնայ Եգիպտոսի մամլուքներուն ձեռքը, որոնք վերջ կու տան Կիլիկիոյ հայ թագաւորութեան:
1441	Վաղարշապատի մէջ կը գումարուի խորհրդածողով մը: 957 տարիներու բացակայութենէ ետք, կառաջարկեն Գրիգոր Մուսաբեկեանց Կաթողիկոսին որ կաթողիկոսական աթոռը Սիսէն փոխադրէ Էջմիածին, նկատելով որ 66 տարիներէ Ի վեր Հայկական Թագաւորութիւն գոյութիւն չ'ունէր: Կաթողիկոսը կը մերժէ երթալ Էջմիածին, բայց չընդիմանար որ հոն նոր կաթողիկոս մը ընտրուի: Իր յաջորդներու օրինական Իշխանութիւնը կը տարածուի Սիսի եւ շրջակայքի վրայ: Վաղարշապատի խորհրդածողովը, Կիրակոս Խոր Վիրապեցին կ'ընտրէ Ամենայն Հայոց կաթողիկոս: Կիրակոս Ա. կաթողիկոսը կը վերակենդանացնէ եւ կը վերակազմակերպէ Սբ. Էջմիածնայ աթոռը:
1512	Յակոբ Մեղապարտ կը տպէ առաջին հայերէն գիրքը Վենետիկի մէջ:
1517	Հոկտեմբեր 31 ին Wittenberg Castle Church Ի դրան վրայ կը կախէ 95 վիճելի նիւթերու ցանկ մը եւ կը սկսի Բողոքական Շարժումը:
1547	Էջմիածնայ մէջ գաղտնի ժողով Հայաստանի ազատագրման համար: Ստեփանոս Ե. Սալմաստեցի կ'ուղեւորուի Հռոմ, ուր կը կենայ երկու տարի, արեւմուտքի քրիստոնէայ պետութիւններէն օգնութիւն ձեռք բերելու նպատակով:
1651	Երուսաղէմի Խորհրդածողովին Փիլիպոս Ա. Աղբակեցի Ամենայն Հայոց կաթողիկոսը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Ներսէս Կաթողիկոսը հանդիպում մը

	կ'ունենան ճշդելու համար օրէնքներ եւ իրաւասութեանց սահմաններ երկու Աթոռներուն միջեւ:
1655	Յակոբ Դ. Զուղայեցի կաթողիկոս Էջմիածնի:
1666	Ամսօրտամի մէջ կը տպուի առաջին հայերէն Աւետարանը:
1677	Յակոբ Դ. Զուղայեցի կաթողիկոսը Հայաստանի ազատագրման ազգային ժողովը կը բանայ Էջմիածնի մէջ:
1694	Եփրեմ Ղափանցի Պոլսոյ պատրիարք կ'ընտրուի եւ կը հալածէ Քաղկեդոնի վարդապետութիւնը եւ Հոռոմի եպիսկոպոսին գլխաւորութիւնը ընդունող Հայերուն դէմ:
1700	Հիմնադրութիւն Մխիթարեան Միաբանութեան, Մխիթար Սեփաստացիի կողմէ
1705	Յովհաննէս Կոլոտ Պաղշեցի կը դառնայ Կոստանդնուպոլսոյ պատրիարք: Ան Սկիւտարի մէջ կը հիմնէ դպրոց մը, իսկ Գում Գափուի մէջ գրադարան մը: Իր ջանքերով կը տպուին Ակաթանքեղոսի, Յովնան Մամիկոնեանի, Բաւստոս Բիւզանդի, Մեսրոպ Վայոց Ձորեցիի, Գրիգոր Տաթեւացիի գործերէն: Հայ Կաթողիկ Մխիթարեան միաբանութիւնը կը հաստատուի Վենետիկի Սուրբ Ղազար կղզիին վրայ, ուր կը մնայ մինչեւ օրս: Մխիթարեանները նշանաւոր են իրենց կրթութեամբ եւ ուսանողութեամբ եւ մեծ ազդեցութիւն ունեցած են հայոց եւ Հայաստանի վրայ:
1717	Գրիգոր Ծիրվանցի կը դառնայ Երուսաղէմի պատրիարք: Ան կը կոչուի «Շղթայակիր» որովհետեւ իր վիզէն անցուցած էր շղթայ մը, մինչեւ որ Երուսաղէմի պատրիարքութեան բոլոր պարտքերը վճարուէին: Յովհաննէս Կոլոթ պատրիարքի օժանդակութեամբ, մեծ գումարներ կը հաւաքէ Երուսաղէմի կարիքները հոգալու համար:
1771	Սիմոն Ա. կաթողիկոս Երեւանցիի օրով՝ 1763-80 Էջմիածնի մէջ կը հիմնուի առաջին տպարանը:
1773	Մխիթարեանները մասնաճիւղ Մը կը բանան Թրիէսթի մէջ եւ կը փոխադրուին Վիեննա:
1828-1820	Բողոքական միսիոնարները թուրքերը Բողոքական դարձնելու իրենց ճիգին մէջ ձախողելէ ետք, կը ձեռնարկեն հայերը Բողոքական դարձնելու աշխատանքին: 19րդ. դարու վերջաւորութեան կը տեսնուի Բողոքական շատ տարածուն գործունէութիւն:
1836	Ռուսական Իշխանութիւնները Սահմանադրութիւն մը կը պատրաստեն Հայաստանեայց եկեղեցւոյ համար: Կանոնագրութիւնը կ'արտօնէ ներքին ազատութիւն մը սակայն կը ճշդէ 8 կղերականներէ բաղկացած Խորհուրդ մը, որ կ'իշխայ Ռուսական հսկողութեան տակ:
1869	Մկրտիչ Խրիմեան Եպիսկոպոսը կը դառնայ Կոստանդնուպոլսոյ պատրիարք: Ան ազգայնասէր հայ մըն էր:
1873	Մկրտիչ Եպիսկոպոս կը հրաժարի թրքական ճնշումներու տակ: Ջինք կը փոխարինէ այլ ազգայնասէր՝ Ներսէս Վարձպետեան եպիսկոպոսը:
1874	Էջմիածնի մէջ կը հիմնուի Գետրքեան Ճեմարանը:
1879	Ներսէս պատրիարք կ'ընդունի Կաթողիկոսութենէ Հայաստանեայց Եկեղեցւոյ դարձած 75 հայեր, որոնցմէ էր Մաղաքիա Օրմանեանը, որ յետագային կը դառնայ Կոստանդնուպոլսոյ պատրիարք:
1884	Ռուսերը կը հրամայեն հայկական եկեղեցիներու վարժարանները Ռուսականացնել: Եկեղեցի կը մերժէ. Ռուսերը կը փակեն Հայկական Վարժարանները:
1886	Հայ կղերականութիւնը կը համաձայնի ներմուծել Ռուսերէնի Ուսուցման Ծրագիր մը Հայկական Դպրոցներէ ներս: Յաջորդող 10 տարիներուն Եկեղեցին միշտ դէմ դնելով հանդերձ Ռուսականացման յաւելեալ

	ծրագիրներուն, ձեռով մը կը յաջողի բաց պահել վարժարանները:
1889	Կոստանդնուպոլսոյ պատրիարք Խորէն Աշըգեան կը հիմնէ պատրիարքութեան ճեմարանը Արմաշի մէջ: Մաղաքիա Օրմանեան Արքեպիսկոպոսը կը դառնայ Արմաշի ճեմարանին առաջին Տնօրէնը: Արմաշի ճեմարանը կը դառնայ շատ կարեւոր Ոսումնական կեդրոն մը որ սակայն կը քանդուի 1915 ին
1890	Հիմնարկութիւն սուրբ Գրքի Դպրոցին, Երուսաղէմ:
1892	Մկրտիչ Խրիմեան Եպիսկոպոս «Խրիմեան Հայրիկ» կ'ընտրուի Էջմիածնայ կաթողիկոս
1902	Սահակ Բ. Խապայեան կ'ընտրուի Կաթողիկոս Մէծի Տանն Կիլիկիոյ:
1903	Մկրտիչ Ա. Խրիմեան Ամենայն Հայոց Կաթողիկոս դիւանագիտութեամբ եւ համբերանքով կը դիմադրէ Եկեղեցւոյ կալուածները գրաւելու Ռուսական փորձերուն եւ կը յաջողի: Ան չի յանձնէր Էջմիածնայ բանալիները Ռուսական Իշխանութիւններուն:
1911	Գէորք Դ. Ամենայն Հայոց Կաթողիկոս կ'ընտրուի
1914	Համաշխարհային Առաջին Պատերազմը կը բռնկի:
1915-1923	Հայկական Ցեղասպանութիւն
1916	<ul style="list-style-type: none"> • Ծննդալ Գաշան կը հրամայէ Սահակ Բ. Կաթողիկոսին որ ստանցնէ Օսմանեան կայսրութեան Ամենայն Հայոց Կաթողիկոս-Պատրիարքի պաշտօնը որ Կիլիկիոյ տան քանդումէն ետք հաստատուած էր Երուսաղէմ: Սահակ Բ. Կաթողիկոս կ'ընդունի յուսալով վերջ դնել Հայոց ջարդերուն: Ի Զուր: • Կոմիտաս վարդապետ Կոստանդնուպոլսոյ մէջ կը նետուի անկելանոց մը: • Զաւէն Արմէնեան՝ Կոստանդնուպոլսոյ պատրիարքը կ'աքսորուի Պաղտատ
1917	Սահակ Բ. Կաթողիկոս կ'աքսորուի Դամասկոս
1918	<ul style="list-style-type: none"> • Թրքական բանակը կը շարունակէ գրաւել հայկական հողերը Գէորք Ե. կը մնայ Էջմիածին հակառակ հայ զինուորական ղեկավարութեան թելադրանքին: • Սահակ Բ. Կաթողիկոս կը վերադառնայ Կիլիկեայ
1920	կ'ընդունուի Գրիգորեան Տոմարակալութիւնը:
1921	Սահակ Բ. ի կը ստիպեն պարպել Կիլիկիան:
1922	Զաւէն Եղեանեան , Պոլսոյ պատրիարքը կը փախչի թափուր ձգելով աթոռը:
1929	<ul style="list-style-type: none"> • Աշնան Հալէպի ազգային առաջնորդարանին մանկապարտէզի սրահին մէջ պաշտօնապէս կը բացուի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կիրակնօրեայ Դպրոցներ • Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը կը ստանձնէ Պէյրութի, Դամասկոսի եւ Կիպրոսի Թեմերը, որոնք կը պատկանէին Երուսաղէմի պատրիարքութեան:
1930	Գէորք Ե. կը վախճանի Ս. Էջմիածնայ մէջ: 1932 ին զինք կը փոխարինէ Խորէն Մուրատպէկեան:
1931	Հալէպի մէջ կարճ ժամանակ մը մնալէ ետք, Սահակ Բ. կաթողիկոս կը հաստատուի Անթիլիաս, Պէյրութի հիւսիսը: Անթիլիասը կը դառնայ Կիլիկիոյ կաթողիկոսութեան նոր նստավայրը:
1938	Խորէն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսը սպաննուած կը գտնուի իր

	սենեակին մէջ, խորհրդաւոր պայմաններու տակ:
1939	Սահակ Բ. Վշտալի կաթողիկոս կը վախճանի Անթիլիասի մէջ:
1943	Գարեգին Յովսէփեան Արքեպիսկոպոս կ'ընտրուի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս: Պատերազմին պատճառաւ երկու տարի կը սպասէ իր աթոռին վրայ նստելու համար: Ան կը ձեռնարկէ Ս. Էջմիածնայ եւ Անթիլիասի միջեւ գործակցութիւն ստեղծելու աշխատանքին: Ան կը մշակէ մշակութային գործունէութիւն, Անթիլիասի մէջ:
1945	Գեորք Զ. կաթողիկոս կը ձեռնադրուի Գրեմլին: Ընտրութեան իրաւունք ստանալէ ետք: Իր ընտրութեան եւ ոճման ներկայ կ'ըլլայ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Գարեգին Ա. ը: Գեորք Զ. կաթողիկոս կը վերաբանայ Էջմիածնայ ճեմարանը:
1952	Գարեգին Ա. կը վախճանի:
1955	Վազգէն Ա. կաթողիկոս կ'ընտրուի: Ան յաճախ կը ճամբորդէ Հայաստանի եւ Սփիւքի միջեւ կապերը զօրացնելու համար: Ամբողջ սովետական իշխանութեան դժուարին օրերուն ան կը պահէ Ս. Էջմիածինը: Իր օրով Հայաստանեայց եկեղեցին կը միանայ եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին:
1956	Զարեհ Փայասլեան կ'ընտրուի կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ: Ան կը դառնայ աշխարհաճիւ հալութեան արդար դատին խորհրդակցիչը:
1956	Վազգէն Ա. Էջմիածնայ նորընտիր կաթողիկոսը կ'այցելէ Սիսի աթոռին կաթողիկոսական ընտրութենէն առաջ:
1962	Էջմիածնի եւ Սիսի եկեղեցիները կ'անդամակցին եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին:
1963	<ul style="list-style-type: none"> • Զարեհ Ա. կաթողիկոս կը վախճանի: Խորէն Ա. կ'ընտրուի կաթողիկոս: Նոյն տարին հանդիպում մը կ'ունենայ Վազգէն Ա. կաթողիկոսին հետ խօսելու համար երկու կաթողիկոսութիւններու տարակարծութիւններուն մասին: • Գարեգին վրդ. Սարգիսեան «հետագային Գարեգին Բ. Կիլիկիոյ եւ Գարեգին Ա. Անենայն հայոց» կը հիմնէ ՀԵՀՈՄ ը «Հայց. եկեղեցոյ Համալսարանական Ուսանողներու Միութիւն
1977	Գարեգին Բ. Սարգիսեան, աթոռակից Խորէն Ա. ի
1983	Խորէն Ա. կաթողիկոս կը վախճանի Անթիլիասի մէջ: Իրեն կը յաջորդէ Գարեգին Բ. Սարգիսեան, որ կը դառնայ լուսաւոր դէմք մը հայաստանեայց եկեղեցոյ նորագոյն պատմութեան մէջ:
1988	Կը սկսի Նակորնի Ղարաբաղի ազատագրման պայքարը :
1988	Դեկտեմբեր 7ին, Հայաստանի Հիւսիս Արեւմտեան շրջանին մէջ, զօրաւոր երկրաշարժի մը զոհ կ'երթան տասնեակ հազարաւոր հայեր: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Գարեգին Բ. զօրակոչի կ'ենթարկեն սփիւքը, որ օժանդակէ Հայաստանին:
1994	Վազգէն Ա. կաթողիկոս կը վախճանի:
1995	Գարեգին Բ. կ'ընտրուի Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ս. Էջմիածնայ մէջ եւ կը դառնայ Գարեգին Ա.:
1996	Արամ Ա. կ'ընտրուի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս:
1999	Գարեգին Ա. կը վախճանի: Գարեգին Արքեպիսկոպոս Ներսէսեան՝ Արարատեան շրջանի Առաջնորդ, կ'ընտրուի Ամենայն Հայոց Կաթողիկոս, որպէս Գարեգին Բ.:
2001	Քրիստոնէութիւնը Հայաստանի Պետական Կրօնք հոշակման 1700 ամեակ:

--	--